

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի Կողմերը,

մտահոգված լինելով միջուկային, ռադիոլոգիական, քիմիական և կենսաբանական զենքերի (այսուհետև՝ զանգվածային ոչնչացման զենք կամ ՁՈՁ) տարածմամբ առաջացած համատարած սպառնալիքով և միջուկային, ռադիոլոգիական, քիմիական և կենսաբանական նյութերը որպես զենք օգտագործելու վտանգով,

վերահաստատելով ՁՈՁ-երի և դրանց մատակարարման միջոցներին առնչվող տեխնոլոգիաների, նյութերի և փորձագիտական գիտելիքների տարածումը կանխելու անհրաժեշտությունը,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1540 բանաձևը, ըստ որի՝ բոլոր պետությունները պարտավորություն ունեն գերծ մնալ որևէ տեսակի աջակցություն տրամադրելուց ոչ պետական դերակատարներին, որոնք փորձում են մշակել, ձեռք բերել, արտադրել, տնօրինել, տեղափոխել, փոխանցել կամ օգտագործել միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքերն ու դրանց մատակարարման միջոցները,

ընդունելով, որ պետությունների միջև համատեղ, բազմակողմ ջանքերն արդյունավետ միջոց են այդպիսի տարածումը կանխելու համար, և ճանաչելով գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացումների կարևոր դերը՝ որպես տարածման այսօրվա մարտահրավերների առանցքային տարրի,

հաշվի առնելով 1992 թ. նոյեմբերի 27-ին Մոսկվայում ստորագրված Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (այսուհետև՝ ՄԳՏԿ կամ Կենտրոն) հիմնադրման մասին համաձայնագրով (այսուհետև՝ «1992թ. Համաձայնագիր») և 1993 թ. դեկտեմբերի 27-ին Մոսկվայում ստորագրված Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հիմնադրման մասին համաձայնագրի ժամանակավոր կատարման մասին արձանագրությամբ (այսուհետև՝ «Համաձայնագրի ժամանակավոր կատարման մասին արձանագրություն») նախատեսված դրույթները,

ընդունելով ՄԳՏԿ-ի համար՝ ՁՈՁ-երի համար կիրառելի տեխնոլոգիաներին, փորձագիտական գիտելիքներին և առնչվող նյութերին տիրապետող պետություններում գիտնականների և ճարտարագետների կողմից խաղաղ նպատակներով իրականացվող հետազոտական և զարգացման գործունեության աջակցության և մշակման միջոցով

ԶՈԶ-երի կամ առնչվող նյութերի տարածման հանգեցնող գործունեության մեջ ներգրավվելու դրդիչ միջոցները նվազեցնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ՄԳՏԿ-ի կողմից նախկինում կատարված ներդրումը ԶՈԶ-երի տարածումը կանխելու և պետությունների միջև գիտական համագործակցությանը նպաստելու գործում,

գիտակցելով, որ ՄԳՏԿ-ի հաջողված գործունեությունը պահանջում է կառավարությունների, Եվրոպայի միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի (այսուհետև՝ Եվրատոմ), ոչ կառավարական կազմակերպությունների, հիմնադրամների, ակադեմիական ու գիտական հաստատությունների և այլ միջկառավարական ու մասնավոր հատվածի կողմից կայուն աջակցություն,

ցանկանալով, որ ՄԳՏԿ-ն շարունակի իր գործունեությունը ՄԳՏԿ անդամների կազմում վերջերս տեղի ունեցած փոփոխությունների լույսի ներքո,

ցանկանալով նաև համապատասխանեցնել ՄԳՏԿ-ն իր հիմնադրումից ի վեր փոփոխված պայմաններին այնպես, որ ՄԳՏԿ-ի գործունեությունը խթան հանդիսանա և աջակցի ՄԳՏԿ-ի աշխատանքներում մասնակցող, ներառյալ՝ ԶՈԶ-երին և դրանց մատակարարման համակարգերի ոլորտում գիտելիքներ ու հմտություններ ունեցող (այդ թվում՝ երկակի նշանակության գիտելիքներին տիրապետող) գիտնականներին և ճարտարագետներին՝ միջազգային գիտական գործընկերության ձևավորման, համաշխարհային անվտանգության ամրապնդման և նորարարության միջոցով տնտեսական աճի խթանման գործում, և

որոշելով ՄԳՏԿ-ի նպատակները գիտական համագործակցության միջոցով ավելի արդյունավետ իրականացնելու համար շարունակել ՄԳՏԿ-ի գործունեությունը 1992 թ. Համաձայնագրի և դրա փոփոխությունների հիմքի վրա սույն Համաձայնագիրը կնքելու միջոցով և դրանով փոխարինել Համաձայնագրի ժամանակավոր կատարման մասին արձանագրությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

(A) ՄԳՏԿ-ն, ի սկզբանե հիմնված լինելով 1992 թ. Համաձայնագրով որպես միջկառավարական կազմակերպություն՝ շարունակում է իր գործունեությունը սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է իր տարածքում խթանել Կենտրոնի գործունեությանը: Իր նպատակներին հասնելու համար Կենտրոնը, Կողմերի օրենքներին և կանոնակարգումներին համապատասխան, պետք է ունենա պայմանագրեր կնքելու, անշարժ և շարժական գույք ձեռք բերելու և տնօրինելու ու դատարանում որպես պատասխանող և հայցվոր հանդես գալու իրավունակություն:

(B) Սույն Համաձայնագրի օգտագործման ընթացքում հետևյալ եզրույթներն ունեն սույն հոդվածում նշված սահմանումները.

- i. **«Կողմեր»** նշանակում է սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրն ստորագրած Կողմեր, որոնք ծանուցում են ներկայացրել՝ համաձայն սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածի «C» կետի, ինչպես նաև յուրաքանչյուր և բոլոր այն պետությունները, որոնք միացել են սույն Համաձայնագրին՝ համաձայն սույն Համաձայնագրի 13-րդ հոդված «B» կետի,
- ii. **«Կենտրոնի աշխատակազմ»** նշանակում է ֆիզիկական անձինք, ովքեր Կենտրոնի աշխատակից են կամ աշխատում են Կենտրոնի հետ պայմանագրային հիմունքներով կամ պաշտոնի են անցել կամ ժամանակավոր պաշտոնակատեր են Կենտրոնում՝ համաձայն Կենտրոնի և Կողմերից մեկի կամ մի քանիսի միջև պայմանավորվածության,
- iii. **«ընտանիքի անդամներ»** նշանակում է ամուսիններ, 21 տարին չլրացած, խնամակալության տակ գտնվող չամուսնացած զավակներ, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման ուսանող հանդիսացող 23 տարին չլրացած՝ խնամակալության տակ գտնվող չամուսնացած զավակներ և չամուսնացած զավակներ, ովքեր ունեն ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն,
- iv. Կենտրոնի **«գործունեություն»** նշանակում է Կենտրոնի հովանավորության ներքո իրականացվող նախագծեր և այլ աշխատանք, որն իրականացվում է սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան,
- v. Կենտրոնի **«նախագիծ»** նշանակում է որոշակի ժամկետով աշխարհի որևէ կետում իրականացվող համատեղ գործունեություն, որը կարող է ներառել դրամաշնորհներ և/կամ սարքավորումներ, և որը ենթակա է հաստատման սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն,
- vi. Կառավարիչների խորհրդի **«համաձայնություն»** նշանակում է որոշումն ընդունելու համար կայացող հանդիպմանը մասնակցող և քվեարկող՝ Կառավարիչների խորհրդի բոլոր Կողմերի համաձայնություն՝ քվորումի առկայության դեպքում, բացառությամբ սույն Համաձայնագրով նախատեսված դեպքերի: ՄԳՏԿ-ի Կանոնադրությունը, սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի համապատասխան, սահմանում է Հանդիպումներում քվորումը և Կողմերի՝ հանդիպումների մասնակցության թույլատրելի ձևերը,

- vii. **«Ընդունող պետություն»** նշանակում է այն Կողմը, որը նշանակվել է որպես Ընդունող պետություն՝ համաձայն սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի «A» կետի,

- viii. **«Երկակի նշանակության տեխնոլոգիաներ, նյութեր և փորձագիտական գիտելիքներ»** նշանակում է տեխնոլոգիաներ, նյութեր և փորձագիտական գիտելիքներ, որոնք ունեն և՛ առևտրային կիրառություն, և՛ նախատեսված են տարածման համար այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ԶՈՁ-երի կամ դրանց մատակարարման միջոցների մշակումը, արտադրությունը, օգտագործումը կամ կատարելագործումը,

- ix. **«Երկակի նշանակության գիտելիքներ և հմտություններ»** նշանակում է գիտելիքներ ու հմտություններ, որոնք կիրառելի են ԶՈՁ-երի կամ դրանց մատակարարման միջոցների մշակմանը, արտադրմանը, կիրառմանը կամ խթանմանն առնչվող ոլորտներում երկակի նշանակության տեխնոլոգիաների, նյութերի և փորձագիտական գիտելիքների գործածության դեպքում, և

- x. **«Առնչվող նյութեր»** նշանակում է համապատասխան բազմակողմ պայմանագրերում և համաձայնագրերում ամրագրված կամ վերահսկման ազգային ցուցակներում ընդգրկված նյութեր, սարքավորումներ և տեխնոլոգիաներ, որոնք կարող են օգտագործվել ԶՈՁ-երի կամ դրանց մատակարարման միջոցների նախապատրաստման, մշակման, արտադրության կամ օգտագործման համար:

Հոդված 2

(A) Կենտրոնը մշակում, հաստատում, ֆինանսավորում ու վերահսկում է Կողմերի տարածքներում գտնվող հաստատություններում և կառույցներում խաղաղ նպատակներով իրականացվող գործունեությունը: Նախագծերը կարող են իրականացվել սույն Համաձայնագրի Կողմեր չհանդիսացող՝ ԶՈՁ-երի համար կիրառելի տեխնոլոգիաներին, փորձագիտական գիտելիքներին և առնչվող նյութերին տիրապետող պետություններում այն դեպքերում, երբ տվյալ պետությունները գրավոր հաղորդագրությամբ դիմում են Կառավարիչների խորհրդին այդպիսի նախագծերի իրականացման խնդրանքով, և երբ Կառավարիչների խորհուրդը միաձայն հավանություն է տալիս այդպիսի նախագծերին: Վերոնշյալից անկախ՝ այն անձանց, ովքեր ՄԳՏԿ-ի անդամ չհանդիսացող պետության քաղաքացիներ են, կարող է թույլատրվել մասնակցել ՄԳՏԿ-ի կողմից սույն Համաձայնագրի Կողմեր հանդիսացող

պետություններում իրականացվող գործունեությանը:

(B) Կենտրոնի նպատակներն են.

- i. նպաստել ՁՈԶ-երի և դրանց մատակարարման համակարգերի, ինչպես նաև ՁՈԶ-երի կամ դրանց մատակարարման համակարգերի մշակմանը, արտադրմանը, կիրառմանը կամ խթանմանն անմիջականորեն առնչվող առանցքային տարրեր հանդիսացող տեխնոլոգիաների, նյութերի և փորձագիտական գիտելիքների (այդ թվում՝ երկակի նշանակության տեխնոլոգիաների, նյութերի և փորձագիտական գիտելիքների) տարածման կանխարգելմանն ուղղված միջազգային մեխանիզմների կատարելագործմանը,
- ii. հնարավորություն ընձեռել ՁՈԶ-երին և դրանց մատակարարման համակարգերին, այդ թվում՝ երկակի նշանակության գիտելիքներին և հմտություններին տիրապետող գիտնականներին ու ճարտարագետներին վերապատրաստման և այլընտրանքային զբաղվածության միջոցով կիրառել իրենց գիտելիքը և հմտությունները խաղաղ գործունեության նպատակով,
- iii. խթանել ՁՈԶ-երի կամ դրանց մատակարարման միջոցների դիզայնի, մշակման, արտադրման կամ կիրառման ոլորտում օգտագործվող նյութերի, սարքավորումների և տեխնոլոգիաների հետ վարվելու կարգի և օգտագործման անվտանգության մշակույթի խթանումը, և
- iv. իր գործունեության միջոցով աջակցել միջազգային գիտական համագործակցության զարգացմանը, համընդհանուր անվտանգության ամրապնդման ու նորարարության շնորհիվ տնտեսական աճի խթանմանը, հիմնարար և կիրառական հետազոտությունների ու տեխնոլոգիաների մշակմանը և կոմերցիոն նպատակով կիրառմանը, *inter alia*, շրջակա միջավայրի, էներգետիկայի, առողջապահության և միջուկային, քիմիական և կենսաբանական ապահովության և անվտանգության ոլորտներում, ինչպես նաև նպաստել ՁՈԶ-երի տեխնոլոգիաներին, նյութերին և փորձին տիրապետող գիտնականներին հետագա ինտեգրմանը միջազգային գիտական համայնքին:

Հոդված 3

Իր նպատակներին հասնելու համար Կենտրոնը լիազորված է.

- i. դրամական միջոցների օգտագործմամբ կամ այլ կերպով խթանել և աջակցել սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան իրականացվող գործունեությանը,

- ii. մշտադիտարկել Կենտրոնի գործունեությունը և իրականացնել դրա աուդիտը՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան,
- iii. սահմանել համագործակցության համապատասխան ձևեր և ստանալ ֆինանսական հատկացումներ կամ նվիրատվություններ կառավարություններից, Եվրոպայի միությունից և Եվրատոմից, միջկառավարական կազմակերպություններից, ոչ կառավարական կազմակերպություններից, մասնավոր ոլորտի կազմակերպություններից, հիմնադրամներից, ակադեմիական և գիտական հաստատություններից և առնչվող ծրագրերից,
- iv. անհրաժեշտության դեպքում հիմնել մասնաճյուղային գրասենյակներ կամ տեղեկատվական գրասենյակներ Կողմեր հանդիսացող շահագրգիռ պետություններում կամ Կողմ չհանդիսացող պետությունների տարածքներում, եթե Կառավարիչների խորհուրդը միաձայն համաձայնություն տա նման գրասենյակի հիմնադրմանը Կողմ չհանդիսացող այդպիսի պետության տարածքում, և
- v. զբաղվել սույն Համաձայնագրի շրջանակներում գտնվող գործունեության այլ տեսակներով, որոնց վերաբերյալ համաձայնությունը կարող է ձեռք բերվել Կառավարիչների խորհրդի համաձայնությամբ:

Հոդված 4

(A) Կենտրոնն ունի Կառավարիչների խորհուրդ և Քարտուղարություն, որն իր կազմում, համաձայն Կենտրոնի Կանոնադրության, ունի Գործադիր տնօրեն (հանդիսանում է գլխավոր գործադիր ղեկավար), Գործադիր տնօրենի տեղակալ(ներ) և Կենտրոնի աշխատակազմի այլ անդամներ:

(B) Կառավարիչների խորհուրդը պատասխանատու է.

- i. Կենտրոնի քաղաքականությունը և ընթացակարգի իր սեփական կանոնները սահմանելու համար,
- ii. Քարտուղարության ընդհանուր ղեկավարումը և կառավարումը ապահովելու համար,
- iii. Կենտրոնի ընթացիկ բյուջեն հաստատելու համար,

- iv. Կենտրոնի ֆինանսական և այլ գործերը՝ ներառյալ Կենտրոնի բյուջեի նախապատրաստման ընթացակարգի հաստատումը, հաշիվների ստեղծումը և աուդիտը ղեկավարելու համար,
- v. գործունեության հաստատման ընդհանուր չափանիշները և գերակայությունները ձևակերպելու համար,
- vi. սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն նախագծերի հաստատման համար,
- vii. Կանոնադրության և, անհրաժեշտության դեպքում, իրականացվելիք այլ կարգավորումների ընդունման համար, և
- viii. սույն Համաձայնագրով իրեն վերապահված կամ սույն Համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ այլ գործառույթների իրականացման համար:

(C) Կառավարիչների խորհրդի որոշումներն ընդունվում են համաձայնությամբ:

(D) Յուրաքանչյուր Կողմ Կառավարիչների խորհրդում ունի մեկ ձայն և Կառավարիչների խորհրդում կարող է նշանակել երկուսից ոչ ավելի ներկայացուցիչ:

(E) Կողմերը կարող են հիմնել Գիտական խորհրդատվական կոմիտե՝ կազմված Կողմերի նշանակած ներկայացուցիչներից, Խորհրդին փորձագիտական և այլ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու, քաջալերման ենթակա խաղաղ նպատակներով հետազոտությունների ոլորտների շուրջ Խորհրդին առաջարկություններ ներկայացնելու և Խորհրդի պահանջով ցանկացած այլ խորհուրդ տրամադրելու համար:

(F) Սույն Համաձայնագիրն իրականացնելու համար Կառավարիչների խորհուրդն ընդունում է Կանոնադրություն: Կանոնադրությունը սահմանում է.

- i. Քարտուղարության կառուցվածքը, այդ թվում՝ Գործադիր տնօրենի, Գործադիր տնօրենի տեղակալների և աշխատակազմի այլ առանցքային ներկայացուցիչների գործառույթներն ու պարտականությունները,
- ii. ընտրության, մշակման, հաստատման, ֆինանսավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացների ընթացքը,
- iii. Կենտրոնի բյուջեի նախապատրաստման, հաշիվների ստեղծման և դրանց

աուդիտի ընթացակարգերը,

- iv. Կենտրոնի նախագծերից և նախագծերի արդյունքների տարածումից բխող՝ մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ համապատասխան ուղեցույցները,
- v. Կենտրոնի գործունեությունում կառավարությունների, Եվրոպայի միության և Եվրատոմի, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությունը կարգավորող ընթացակարգերը,
- vi. կադրային քաղաքականությունը, և
- vii. սույն Համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ այլ կարգավորումները:

Հոդված 5

Միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները կամ Կողմ չհանդիսացող պետությունները խորհրդի կողմից կարող են հրավիրվել՝ մասնակցելու Կառավարիչների խորհրդի քննարկումներին դիտորդի կարգավիճակով՝ առանց քվեարկելու կարողության:

Հոդված 6

Կառավարիչների խորհրդի հաստատմանը ներկայացվող յուրաքանչյուր նախագծի առաջարկ պետք է զուգակցվի այն պետության կամ պետությունների գրավոր համաձայնությամբ, որտեղ իրականացվելու է աշխատանքը: Նախագծերի հաստատման համար, բացի տվյալ պետության կամ պետությունների նախապես տրված համաձայնությունից, պահաջվում է նաև Կառավարիչների խորհրդի համաձայնությունը:

Հոդված 7

(A) Կառավարիչների խորհրդի կողմից հաստատված նախագծերը կարող են ֆինանսավորվել կամ օժանդակություն ստանալ Կենտրոնի, Կողմերի, ոչ կառավարական կազմակերպությունների, հիմնադրամների, ակադեմիական ու գիտական հաստատությունների, միջկառավարական կազմակերպությունների և մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից: Հաստատված նախագծերի այդպիսի ֆինանսավորումը և օժանդակությունն իրականացվում են օժանդակություն տրամադրողների կողմից նշված ժամկետով և պայմաններով՝ այն պայմանով, որ ժամկետներն ու պայմանները պետք է համապատասխանեն սույն Համաձայնագրին:

(B) Կառավարիչների խորհրդում Կողմերի ներկայացուցիչները և Կենտրոնի Քարտուղարության աշխատակազմն իրավասու չեն ստանալու նախագծի ֆինանսավորում կամ ուղղակիորեն օգուտ ունենալու որևէ նախագծի բյուջեից:

Հոդված 8

(A) Այն պետություններում, որտեղ իրականացվում է միջոցառում, Կենտրոնն իրավունք ունի.

- i. տեղում ստուգելու Կենտրոնի գործունեությունը, նյութերը, մատակարարումները, դրամական միջոցների օգտագործումը, առնչվող ծառայությունները և դրամական միջոցների օգտագործումը Կենտրոնի նախապես ծանուցումից հետո կամ, ի հավելում, ինչպես նախատեսված է նախագծի մասին համաձայնագրում, և
- ii. իր խնդրանքով անցկացնելու Կենտրոնի նախագծերի, գործունեության և օգտագործվող դրամական միջոցների հետ կապված ցանկացած արձանագրության կամ այլ փաստաթղթի ստուգում կամ աուդիտ, որտեղ էլ գտնվեն այդ արձանագրությունները և փաստաթղթերը, Կենտրոնի կողմից ֆինանսավորում տրամադրվելու ժամանակահատվածում և դրանից հետո՝ նախագծի մասին համաձայնագրում սահմանված կարգով:

Սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում պահանջվող գրավոր համաձայնությունը ներառում է ինչպես այն պետության կամ պետությունների համաձայնությունը, որտեղ իրականացվում է նախագիծը, և ընդունող հաստատության համաձայնությունը, որը Կենտրոնին կապահովի նախագծին անհրաժեշտ աուդիտ և մշտադիտարկում իրականացնելու հնարավորությամբ, ինչպես նախատեսված է սույն կետով:

(B) Յուրաքանչյուր Կողմ նաև ունի սույն սույն հոդվածի «A» կետում նշված իրավունքները, որոնք համակարգվում են Կենտրոնի միջոցով՝ կապված այն նախագծերի հետ, որոնք ինքը ամբողջովին կամ մասնակիորեն ֆինանսավորում է կամ որն անցկացվում է իր տարածքում:

(C) Եթե հաստատված է, որ նախագծի իրականացման ժամկետներն ու պայմանները չեն պահպանվել, ապա Կենտրոնը կամ ֆինանսավորող կառավարությունը կամ կազմակերպությունը կարող են պատճառների մասին Կառավարիչների խորհրդին հայտնելուց հետո դադարեցնել տվյալ նախագիծը և ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ըստ նախագծի մասին համաձայնագրի պայմանների:

Հոդված 9

(A) Կենտրոնի գլխավոր գրասենյակը տեղակայված է Ղազախստանի Հանրապետությունում, և Ղազախստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես Ընդունող պետություն, քանի դեռ և մինչև այն ժամանակը, երբ.

- i. Ղազախստանի Հանրապետությունը Կառավարիչների խորհրդին կներկայացնի գրավոր ծանուցում որպես Ընդունող պետության լինելու իր՝ այլևս ցանկություն չունենալու մասին,
- ii. սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի «A» կետով սահմանված որևէ Կողմ կամ սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի «B» կետի համաձայն սույն Համաձայնագրին միացած Կողմ իր տարածքում ՄԳՏԿ գործունեության իրականացումը թույլ տալու նպատակով Կառավարիչների խորհրդին կներկայացնի գրավոր ծանուցում՝ որպես հաջորդ Ընդունող պետություն նշանակվելու խնդրանքով,
- iii. Կառավարիչների խորհուրդը համաձայնության միջոցով կորոշի հաստատել տվյալ կողմի՝ որպես հաջորդ Ընդունող պետություն նշանակվելու վերաբերյալ խնդրանքը,
- iv. որպես հաջորդ Ընդունող պետություն նշանակվելու մասին խնդրանք ներկայացրած Կողմը Կառավարիչների խորհրդին կներկայացնի գրավոր ծանուցում առ այն, որ ընդունում է իր նշանակումը որպես հաջորդ Ընդունող պետություն:

(B) Կենտրոնին նյութական աջակցություն ցուցաբերելով՝ Ընդունող պետության կառավարությունն իր հաշվին Կենտրոնի օգտագործման համար տրամադրում է համապատասխան տարածք, իրականացնում է տարածքի պահպանման, կոմունալ ծառայությունների և անվտանգության ապահովումը: Ընդունող պետության կառավարությունը և ՄԳՏԿ-ն կարող են կնքել համաձայնագիր՝ նշելով այն ժամկետները և պայմանները, որոնց հիման վրա Ընդունող պետությունը Կենտրոնին կտրամադրի նյութական աջակցություն և տարածք:

(C) Ընդունող պետության տարածքում Կենտրոնն ունի իրավաբանական անձի կարգավիճակ և այդ կարգավիճակով իրավասու է կնքելու պայմանագրեր, ձեռք բերելու և տնօրինելու անշարժ և շարժական գույք, ինչպես նաև դատարանում հանդես գալու որպես հայցվոր և պատասխանող:

Հոդված 10

Ընդունող պետությունում՝

i.

- a) ՄԳՏԿ-ի կողմից ստացված ֆինանսական միջոցները և այդ միջոցներից ստացված ցանկացած եկամուտ ենթակա չեն հարկման Ընդունող պետության տարածքում:
- b) Կենտրոնը կամ նրա ցանկացած մասնաճյուղ ենթակա չէ որևէ հարկման սեփականության նկատմամբ, որը ենթակա է հարկման Ընդունող պետության հարկային օրենսդրության համաձայն:
- c) Կենտրոնի գործունեության համար հատկացված կամ օգտագործվող գույքը, նյութերն ու այլ սեփականությունը կարելի է ներմուծել Ընդունող պետություն, արտահանել այնտեղից կամ օգտագործել այդ տարածքում՝ առանց սակագների, տուրքերի, մաքսային տուրքերի, ներմուծման հարկի, ավելացած արժեքի հարկի (ԱԱՀ) և այլ համանման հարկերի կամ վճարների գանձման: Գույքը, նյութերը և այլ անշարժ կամ շարժական սեփականությունը ՄԳՏԿ-ի կողմից կարող են փոխանցվել կամ այլ եղանակով տրամադրվել իրավաբանական անձանց (ներառյալ՝ Ընդունող պետության գիտական կազմակերպություններին, բայց չսահմանափակվելով նրանցով) և կարող են պատկանել կամ օգտագործվել Կենտրոնի և/կամ այն անձանց կողմից, որոնց նմանատիպ ապրանքները տրամադրվել են կամ փոխանցվել են առանց սակագների, տուրքերի, մաքսային տուրքերի, ներմուծման հարկի, ԱԱՀ-ի, սեփականության հարկերի և համանման հարկերի կամ վճարների գանձման:
- d) Ընդունող պետության քաղաքացի չհանդիսացող Կենտրոնի աշխատակիցներն ազատվում են Ընդունող պետությունում ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի վճարումից:
- e) Կենտրոնի նախագծերի կապակցությամբ իրավաբանական անձանց, ներառյալ Ընդունող պետության գիտական կազմակերպությունների ստացած ֆինանսական միջոցները Ընդունող պետությունում ենթակա չեն հարկման:
- f) Կենտրոնի նախագծերի շրջանակներում ֆիզիկական անձանց, մասնավորապես գիտնականների և ճարտարագետների կողմից ստացած ֆինանսական միջոցները չեն ներառվում այդ անձանց՝ ընդհանուր հարկվող եկամտի մեջ:

ii.

- a) Կենտրոնը, Կողմերը, կառավարությունները, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններն իրավունք ունեն Կենտրոնի գործունեության իրականացման հետ կապված դրամական միջոցները առանց սահմանափակումների, Ընդունող պետության դրամական միավորից տարբեր արտարժույթով փոխանցել Ընդունող պետություն կամ այնտեղից արտահանել: Յուրաքանչյուրն իրավունք ունի կատարելու այդ եղանակով փոխանցումներ իր կողմից Ընդունող պետություն մուտք արված ընդհանուր գումարը չգերազանցող գումար միայն, և
- b) Կենտրոնի և նրա գործունեության ֆինանսավորման համար Կենտրոնն իրավունք ունի իր և սույն հոդվածի ii-րդ կետի «a» ենթակետում նշված կառույցների անունից վաճառելու արտարժույթ Ընդունող պետության ներքին արժույթային շուկայում:

iii.

Կենտրոնի որևէ գործունեության մասնակցող՝ Ընդունող պետությանը չպատկանող կազմակերպությունների և Ընդունող պետության քաղաքացի չհանդիսացող կամ մշտական բնակության իրավունք չունեցող աշխատակիցներն ազատվում են որևէ մաքսատուրքից և վճարից սեփական կամ տնային օգտագործման գույքը Ընդունող պետություն ներկրելու, այնտեղից արտահանելու կամ իրենց և իրենց ընտանիքների անդամների կողմից Ընդունող պետության տարածքում դրանց անձնական օգտագործման համար:

Հոդված 11

(A) Ընդունող պետությունում ՄԳՏԿ-ն և նրա ակտիվներն ու ունեցվածքն անձեռնմխելի են իրավազրկության և հարկադիր կատարման տեսանկյունից՝ բացառությամբ, երբ ՄԳՏԿ-ն կոնկրետ դեպքերում հստակ հրաժարվում է անձեռնմխելիությունից:

(B) Արտոնությունները և անձեռնմխելիությունը շնորհվում են Կենտրոնին բացառապես սույն Համաձայնագրում ամրագրված նպատակների իրագործման համար:

(C) Սույն հոդվածի դրույթները չեն խոչընդոտում ստանալ կիրառելի միջազգային պայմանագրերով կամ ցանկացած պետության ազգային օրենսդրությամբ սահմանված փոխհատուցում կամ հատուցում:

(D) Սույն հոդվածի «A» կետում նշված որևէ բան չպետք է մեկնաբանվի որպես Ընդունող պետության քաղաքացիներին կամ նրա տարածքում մշտապես բնակվող անձանց դատաքննությունից կամ հայցերից ազատող միջոց:

Հոդված 12

(A) Ընդունող պետության տարածքում գտնվող Կենտրոնի աշխատակիցներն ու

նրանց ընտանիքների անդամներն Ընդունող պետության կառավարության կողմից կստանան հետևյալ արտոնությունները և անձեռնմխելիությունը.

- i. անձեռնմխելիություն ձերբակալությունից, կալանքից, դատական գործընթացից՝ ներառյալ քրեական, քաղաքացիական կամ վարչական իրավագործությունը, իրենց ասածի կամ գրածի և պաշտոնական կարգավիճակում իրենց կատարած ցանկացած գործողության համար,
- ii. ազատում ցանկացած եկամտի, սոցիալական ապահովագրության և այլ հարկերից, մաքսերից կամ այլ վճարներից՝ բացառությամբ այն վճարների, որոնք սովորաբար ներառվում են ապրանքի գնի մեջ կամ վճարվում են մատուցած ծառայությունների դիմաց,
- iii. անձեռնմխելիություն սոցիալական ապահովագրությունից,
- iv. անձեռնմխելիություն ներգաղթի սահմանափակումներից և օտարերկրացիների գրանցման պահանջից, և
- v. առաջին անգամ պաշտոնն ստանձնելու ժամանակ իրենց կահույքի և անձնական գույքի ներմուծման իրավունք՝ առանց Ընդունող պետության սակագների, հարկերի, մաքսային վճարների, ներմուծման հարկերի և այլ համանման հարկերի և գանձումների վճարման և պաշտոնավարումն ավարտելիս անձնական գույքի և կահույքի արտահանման իրավունք՝ առանց Ընդունող պետության սակագների, հարկերի, մաքսային վճարների, ներմուծման հարկերի և այլ համանման հարկերի և գանձումների վճարման:

Սույն հոդվածի i ենթակետի դրույթները չեն կիրառվում այն քաղաքացիական հայցերի դեպքում, որոնք՝ ա) բխում են Կենտրոնի աշխատակիցների հետ կնքված այն պայմանագրերից, որոնցում նրանք ակնհայտ կամ անուղղակի կերպով որպես կողմ հանդես չեն եկել Կենտրոնի գործակալի կարգավիճակում, կամ բ) ներկայացվում են երրորդ անձի կողմից՝ Ընդունող պետությունում ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տրանսպորտային միջոցի կողմից պատճառված վնասի համար:

(B) Ընդունող պետության կառավարությունը Կառավարիչների խորհրդի կազմի մեջ մտնող Կողմերի ներկայացուցիչներին, Գործադիր տնօրենին ու Գործադիր տնօրենի տեղակալներին, ի հավելումն սույն հոդվածի «A» կետում նշված արտոնություններին և անձեռնմխելիությանը, ընձեռում է որոշ հավելյալ արտոնություններ, անձեռնմխելիություն, ազատումներ և դյուրացումներ, որոնք

Ընդունող պետության կողմից սովորաբար տրվում են իր տարածքում գտնվող միջազգային կազմակերպությունների անդամների և գործադիր տնօրենների ներկայացուցիչներին:

(C) Սույն Համաձայնագրի որևէ դրույթ Ընդունող պետության կառավարությունից չի պահանջում իր քաղաքացիներին կամ այնտեղ մշտապես բնակվող անձանց տրամադրել սույն հոդվածի «A» և «B» կետերում նախատեսված արտոնությունները և անձեռնմխելիությունը:

(D) Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես սույն հոդվածի «A» և «B» կետերում նշված անձանց որևէ այլ համաձայնագրով ընձեռած արտոնությունների, անձեռնմխելիության և այլ օգուտների սահմանափակում:

Հոդված 13

(A) Վրաստանը, Ղրղզստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Տաջիկստանի Հանրապետությունը պարտավորվում են ստանձնել սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի «C» կետով, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված՝ Ընդունող պետությանը վերապահված պարտավորությունները:

(B) Յուրաքանչյուր պետություն, որը ցանկություն ունի միանալու սույն Համաձայնագրին վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո, այդ մասին պետք է տեղեկացնի Կառավարիչների խորհրդին Գործադիր տնօրենի միջոցով: Կառավարիչների խորհուրդը Գործադիր տնօրենի միջոցով այդ պետությանը կտրամադրի սույն Համաձայնագրի վավերացված պատճենը: Կառավարիչների խորհրդի հավանությանն արժանանալու դեպքում այդ պետությունն իրավունք կստանա միանալու սույն Համաձայնագրին: Այդ պետության համար սույն Համաձայնագրին ուժի մեջ կմտնի միանալու մասին իր փաստաթուղթն Ավանդապահին հանձնելու ամսաթվից հետո՝ 30-րդ (երեսուներորդ) օրը: Տեխնոլոգիաներ, փորձագիտական գիտելիքներ կամ ՁՈՁ-երին առնչվող հարակից նյութեր ունեցող ցանկացած պետություն, որը միանում է սույն Համաձայնագրին, իր տարածքում ՄԳՏԿ-ի գործունեությունը թույլատրելու նպատակով, ինչը պետք է նշված լինի միանալու մասին իր փաստաթղթում, սույն Համաձայնագրին միանալով, պարտավորվում է կատարել այն պարտավորությունները, որոնք սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի «C» կետով և 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ ստանձնում է Ընդունող պետությունը:

Հոդված 14

(A) Սույն Համաձայնագիրը Կողմերի կողմից ենթակա է վերանայման իր ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո: Այս վերանայումը հաշվի կառնի Կողմերի ֆինանսական

հանձնառությունները և վճարումները:

(B) Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ բացառությամբ այն Կողմի, որը դուրս է եկել կամ ծանուցել է սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին՝ սույն հոդվածի «C» կետին համապատասխան: Եթե դուրս գալու մասին ծանուցում ներկայացրած Կողմը չեղյալ հայտարարի դուրս գալու մասին իր ծանուցումը մինչև վերջինիս օրինական ուժի մեջ մտնելը, ապա նրա վրա կտարածվեն սույն Համաձայնագրի այն փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել այն օրվանից հետո, երբ այդ Կողմը ներկայացրել է դուրս գալու մասին իր ծանուցումը:

(C) Ցանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից Ավանդապահին գրավոր ծանուցում ներկայացնելուց առնվազն 6 ամիս հետո:

Հոդված 15

(A) Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած հարց կամ տարաձայնություն Կողմերի միջև կդառնա խորհրդակցությունների առարկա:

(B) Եթե հարցը չի լուծվել խորհրդակցությունների միջոցով, բոլոր շահագրգիռ Կողմերը կարող են միասին համաձայնել այդ հարցը վեճերի կարգավորման այլ ձևաչափով ներկայացնելու մասին, ինչպիսիք են հաշտեցումը, միջնորդությունը կամ միջնորդ դատարանը (արբիտրաժը):

Հոդված 16

Սույն Համաձայնագրի որևէ դրույթ չի նախատեսում որևէ խոչընդոտ ՄԳՏԿ-ի, որպես ի սկզբանե 1992 թ. Համաձայնագրով հիմնված միջկառավարական կազմակերպություն, գործունեությունը շարունակելու համար՝ ներառյալ ՄԳՏԿ գործող մասնաճյուղերի գործունեությունը, և չի ազդում ՄԳՏԿ-ի ընթացիկ պայմանագրերի, դրամաշնորհների կամ այլ իրավական փաստաթղթերի կամ պայմանավորվածությունների վրա՝ բացառությամբ սույն Համաձայնագրով հատուկ նախատեսված դեպքերի:

Հոդված 17

(A) Սույն Համաձայնագիրը ստորագրման համար բաց է Եվրոպայի միության և Եվրատոմի համար, որոնք հանդես են գալիս որպես մեկ Կողմ, Վրաստանի, Ճապոնիայի, Նորվեգիայի Թագավորության, Ղրղզստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Կորեայի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ

Նահանգների համար:

(B) Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Ավանդապահին:

(C) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի «A» կետի մեջ թվարկված պետությունների և որպես մեկ Կողմ հանդես եկող Եվրոպայի միության ու Եվրատոմի կողմից սույն Համաձայնագրի վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վերջին փաստաթուղթը Ավանդապահին ի պահ հանձնելու ամսաթվից:

(D) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո փոխարինում է «Համաձայնագրի ժամանակավոր կատարման մասին» արձանագրությանը: Այդ պահից սկսած՝ Կողմերը դադարում են պայմանականորեն կիրառել 1992 թ. Համաձայնագիրը:

Հոդված 18

Սույն Համաձայնագրի Ավանդապահը Կենտրոնի Քարտուղարությունն է: Ավանդապահին ուղղված բոլոր ծանուցումները պետք է ներկայացվեն Կենտրոնի Գործադիր տնօրենին: Ավանդապահը կատարում է իր պարտականությունները 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 77-րդ հոդվածին համապատասխան:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Աստանա քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 9-ին՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, գերմաներեն, ճապոներեն, ղազախերեն, կորեերեն, ղրղզերեն, նորվեգերեն, ռուսերեն և տաջիկերեն լեզուներով. բոլոր տեքստերը հավասարապես նույնական են: Երկու կամ ավելի լեզուներով տեքստերի միջև տարբերությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը: